ՄԵԾ ՅՈՐԵԼԵԱՆԻ ՀԱՆԴԷՍՆԵՐԸ

❋❋❋

ՌՈՒՍԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Վերջին թղթաթերում հասած Կովկասահայ թերթերէն կը տեղեկանանք թէ Մեծ Յորելեանին հանդէսները ահագին խանդավառութեան մէջ և ամենայնի փառաւորութեամբ տօնուած են Ռուսահայաստանի ամէն կողմերը և մասնաւորապէս Էջմիածին ու Կովկաս։

Այս մասին Էջմիածնէն հետեւեալը հեռագրուած է Կովկասեան թերթերու։—

Ուրբաթ երեկոյեան ժամը 5ին տեղի ունեցաւ Կաթողիկոսի հանդիսաւոր երթը տաճար։ Վեհափառին ուղեկցում էին արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ, միաբանութիւնը և պատգամաւորներ։ Կաթողիկոսի ամպհովանին բռնած ունէին՝ Թիֆլիսի վանական պետ Ա. Մելեան, Թաւրիզի վանական պետ Զ. Նազարբէկեան, Մշակի խմբագիր Հ. Առաքելեան և Մասկվայի պատգամաւոր Հ. Կուսիկեան։

Երեկոյեան ամրողջ բակը լուսավառուած էր և նուագում էր երաժշտութիւնը։ Եւրկարական լուսաւորութեամբ չքեղ կերպով լուսազարդուած էին Ս. Մեսրոպի և Ս. Սահակի պատկերները։ Երեկոյեան ժամը 7ին կայացաւ պատգամաւորների ընդհանուր ժողով մատենադարանի մեծ դահլիճում։

Հ. Առաքելեան բանալով ժողովը առաջարկեց վերջինիս քննութեան առնել մը խումբ պատգամաւորներու հետեւեալ առաջարկութիւնները։ 1. Կաթողիկոսին ընդհակալական ուղերձ ներկայացնել Համազգային Յոբելեանը կազմակերպելուն համար։ 2. Քննութեան առնել զպրոցական փոխի կազմակերպման հարցը։

Ընդհանուր ժողովը միաձայն ընդունեց այս առաջարկները և Հայկ Տէր Միքայէլեանն նախագահութեամբ քննութեան ենթարկելով նրանց, ընտրեց մի յանձնաժողով խմբագրելու ուղերձները և պատրաստելու զեկուցումներ զպրոցական փոխի և ուսուցչական խնդրի վերաբերեալ։

Զանազան վայրերից եկած ներկայացուցիչների թիւը հասնում է մօտ 250 հոգու։

Սացված են բոլոր երկիրներում գտնվող հայերից, նոյն իսկ Հապէշիստանից, մօտ 400 հեռագիր, որոնցով շնորհաւորում և իրանց բերկրութիւնն են արտայայտում ազգային մեծ տօնի առիթով։

Շնորհաւորութիւններ են ուղարկել նաև առուական, վրացական, յունական, թուրքական, կաթոլիկ և բողոքական այլևայլ հիմնարկութիւններ։

Յոբելեանի փառատեղ տօնակատարութիւնը սկսեց հոկտեմբերի 12ին Օչականում, ուր, պատգարակ յետոյ, հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեց Ս. Մեսրոպի գերեզմանին վրայ ներկայութեամբ Վեհափառ Կաթողիկոսի, ամբողջ հոգեւորականութեան, ներկայացուցիչների և բազմաթիւ ժողովրդի։

Հոգեհանգստից յետոյ Վեհափառ Կաթողիկոսը օրվայ պատշաճ քարոզ խօսեց՝ փառաբանելով Ս. Մեսրոպի, Ս. Սահակի և նրանց մեծ գործը չարունակողների ազգօգուտ գործունէութիւնները։

Խօսվեցին և կարդացվեցին շնորհաւորական ճառեր և ուղերձներ։

Առաջին ճառերը արտասանեցին թիւրքահայերի ներկայացուցիչներ Ստ. Մալխասեանց և Հ. Առաքելեան։

Թուրքերի ներկայացուցչի ճառը ընդունվեց բուռն ծափահարութիւններով։

Հոկտեմբերի 12ի երեկոյեան Էջմիածնում տեղի ունեցաւ ժողովրդական մեծ տօնախմբութիւն, որ համամբել էր ժողովրդի հոծ բազմութիւն չբնակող գիւղերից։

Կարապետ եպիսկոպոսը այդ երեկոյեան կարդաց աւուր պատշաճի դասախօսութիւն։

Շաբաթ, առաւօտեան ժամը 8ին, սկսվեց Կաթողիկոսի, բոլոր հոգեւորականութեան և պատգամաւորների երթը դէպի Օչական գիւղը։ Կաթողիկոսի փակ կառքին հետեւում էին մօտ 50 կառքեր։

Օչականում հաւաքվել էր ժողովրդի հոծ բազմութիւն։ Պատարագիչն էր Այվազեան արքեպիսկոպոսը։ Պատարագից յետոյ Կաթողիկոսը՝ շրջապատված հոգեւորականներով, պատգամաւորներով և բազմաթիւ ժողովրդով՝ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեց հայ տաճարի գտիչ Ս. Մեսրոպի գերեզմանին վրայ։ Հոգեհանգիստից յետոյ եղաւ ժողովրդական նախաճաշ։ Խօսվեցին ճառեր և տեղի ունեցան շնորհաւորութիւններ։

Օչական-գիւղ այդ-որը մի հրաշագեղ պտղաներ էր ներկայացնում։

Հոկտեմբերի 13ին, կիրակի, Մայր-Տաճարում կատարվեց հանդիսաւոր պատարագ և հայրապետական մաղթանք։ Պատարագիչն էր Սուքիաս արքեպիսկոպոսը։

Յերեկվայ ժամը 3ին Գէորգեան ճեմարանում տեղի ունեցաւ հանդիսաւոր յերեկոյթ գրական-երաժշտական բաժնով։ Յերեկոյթը սկսվեց ճեմարանի վերատեսուչ Բաղատա եպիսկոպոսի մի գեղեցիկ ճառով։ Ներկաների վրայ ցեղակոյթը թողեց լաւ տպաւորութիւն։

Երեկոյեան ժամը 6ին կայացաւ ընդհանուր ճաշկերոյթ մօտ 250 պատգամաւորների մասնակցութեամբ։

Առաջին բաժակը առաջարկեց Վեհափառ Կաթողիկոսը Թագաւոր Կայսրի կենացը, որ ընդունվեց ոգեւորված հուրրայով և առուական ազգային օրհներգի երգեակ նուագութեամբ։

Երկրորդ բաժակը առաջարկեց Ալ. Թալանթար Վեհ. Կաթողիկոսի կենացը։

Երրորդ բաժակը առաջարկեց Կաթողիկոսը Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի կենացը, իսկ չորրորդ բաժակը՝ հայ ազգի բարեկեցութեան կենացը։

Հ. Առաքելեան Մարիկոյի, Թիւրքիայի, Պարսկաստանի, Եգիպտոսի և Եւրոպայի հայերի կողմից ողջունեց Ռուսաստանի հայերին։

Ճաշկերոյթից յետոյ, երեկոյեան ժամը 9ին, բոլոր պատգամաւորները վերադարձան ներկայացան Վեհափառ Կաթողիկոսին, և Հ. Առաքելեան պատգամաւորների կողմից շնորհակալութիւն յայտնեց Նորին Ս. Օծութեանը՝ հանդիսաւոր ներկայ փառատեղ տօնը Էջմիածնում կազմակերպելու և հիւրասիրութեան համար։ Կաթողիկոսը օրհնեց բոլորին և յայտնեց, որ համաձայն պատգամաւորների ցանկութեան, խորին հպատակութեան հեռագիր է ուղարկել Թագաւոր կայսրին, նոյնպէս և փոխարքային։

*** Թիֆլիսի Տ. Ներսէս Արք.ը 100,000 բուռլի յատկացուցած է ի նպաստ կրթական գործոցին։

ԻԶՄԻՐԻ ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՆԴԷՍԸ

Կիրակի օր, կէսօրէ առաջ ժամը 10-30ին Իզմիրի Ե. Բ. Ընկերակցութիւնը գետնարքը գտնուող իր ակումբին մէջ մասնաւոր հանդէս կատարեց ի յիշատակ Սրբոյն Սահակայ և Մեսրոպայ, որուն փոխարէն ելին ներկայ գտնուել Հայ-Բողոքական յարանուանութեան և Լուսաւորչական Հայոց պատուարան երկսեռ ներկայացուցիչներ։ Հանդէսը տեղի ունեցաւ չատ պարզ այլ կոկիկ վայելչութեամբ մը, սրահին ճաշատը ունենալով իր միակ պարզ և ակզբունք «Եղբայր ենք մենք» վերտառութիւնը։ Բրօֆ. Կ. Պէշկէթիբեան ելնելով իմաստասիրական բանախօսութեամբ մը օրուան գիրքերուն գանուցոյց, որուն յայտնեց Ամերիկեան Միսիօնարներէն Մր. Գրաւսբը, որ անդրադարձեր է ազգերու և անոնց թարգմանութեամբ լոյս տեսած լեզուներ լեզուով Ս. Սահակ-Մեսրոպի և անոնց թարգմանութեամբ լոյս տեսած Ս. Գրքի գովասանքն ըրաւ, զոր հետզհետէ հայերէնի կը վերածէր Տիար Տիգրան Արմաղանեան Լուսաւորչական հայոց կողմէ գրաւոր կերպով և բաւական երկար բանախօսութիւն մը ըրաւ նոյնպէս Արժ. Տէր Գարրիել քհնյ. Խալատեան։ Բոլոր բանախօսութիւնները կ'ընդգծիչէին հայ նուագախումբի մը տուրեան։ Բոլոր բանախօսութիւնները կ'ընդգծիչէին հայ նուագախումբի մը տուրեան։ Հանդէսը իր պարզութեան մէջ անցաւ տպաւորիչ ու խորունկ ազդեցութիւն թողլով ներկաներու վրայ, ուր երկու յարանուանութիւնները իրարու հանդէպ անգամ մըն ալ ցոյց տուին կատարեալ եղբայրութեան հաւասարներ և կէսօրին աւարտելով լաւ տպաւորութեան տակ ցրուեցան ներկաները։